ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2 դեկտեմբերի 2021թ. թիվ 1631

Գ. ՏՈՆՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով գործուղման առաջադրանքը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Գարիկ Տոնոյանին ս/թ դեկտեմբերի 3-ին մեկ օրով գործուղել ք.Երևան՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կենսաբանություն առարկայի լրացված ձևաթղթերը Երևանի Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց (կազմկոմիտե) ներկայացնելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

02/12/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր